ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԽՐԱՒՈՒՆՔ

# ԱՇԽԱՏԱՆՔ

ՀՈՂ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ

Թիֆլիզում հատով՝ 7 կ. ԱՌԱՋԻՆ 1906 ՏԱՐԻ Այլ տեղերում գինն է 8 կ.

№ 12 ԿԻՐԱԿԻ 16-ԻՆ ԱՊՐԻԼԻ № 12

Թիֆլիս, 17-ին ապրիլի.

—

*Մարդկային ցեղի սրբութիւններից մէկը հազարաւոր տարիներից սկսած եղել է հայրենիքի, վաղեմի գաղափարը, որից հին, գուցէ, միայն ընտանիքն ու օջախն է։*

*Մի երկիր, մի հող, որ երկար տարիների ընթացքում կերակրել է ընտանիք կազմող բոլոր անդամներին—այդ երկիրը դառել է այդ ընտանիքի համար նրա հայրենիքը. և նա նոյնքան աւելի սիրելի և սուրբ է եղել, որքան երկար է տևել ընտանիքի նստակեցութիւնը, որքան աւելի նպաստաւոր են եղել ընտանիքի անդամների համար նրա կեանքն ու ապրուստը։*

*Եւ այսպէս ընտանիքը մի երկար շարք տարիների ընթացքում, նստելով մի հողի վրայ, գործադրելով այդտեղ իր աշխատանքն ու վայելելով իր աշխատանքի պտուղները, այդ հողին, այդ երկրին տուել է հայրենիք անունը և նրա հետ կապուել է բազմաթիւ կապերով։ Ընտանիքը շինել է այդտեղ տուն, տեղ, նա թափել է այդտեղ այն տեսակի աշխատութիւններ, որոնք կարողանային հեշտացնել նրա ապրուստը. նա տնկել է ծառեր, այգիներ, դրանցից օգտուելու համար բերել է առուներ, իր անասուններին շահագործելու համար գտել է արօտներ, խոտհարքներ, պատսպարուելու համար՝ քաշել է պատեր, շինել է կամուրջներ, հաղորդակցութիւնը հեշտացնելու համար բացել է ճանապարհներ, պաշտամունքները կատարելու համար կառուցել է աղօթատներ, իր իրաւունքները պաշտպանելու համար դարձել է անդամ իր նման հարևաններից կազմուած համայնքի—լինի նա գիւղ թէ քաղաք։ Մի խօսքով հայրենիքի վրայ ընտանիքը նայել է որպէս միջավայրի, ուր թէ անցեալում և թէ ներկայում ապահովուած է եղել նրա աշխատանքն ու վաստակը, նրա կեանքն ու իրա-*

digitised by A.R.A.R.@

ւունքները, նրա սեպհականութիւնն ու ձեռնարկութիւնները. և նրա համար իր հայրենիքը նոյնքան սիրելի, նոյնքան պաշտելի և թանկ է եղել, որքան աւելի է ապահովւած եղել նրա (ընտանիքի) կեանքը, աշխատանքն ու իրաւունքները, նրա նիւթական ու հոգեկան պահանջները։

Սա հայրենիքի ստեղծման, նրա իրական գոյութեան պայմաններն են, երբ հայրենիքը սիրելի է նոյն իսկ պաշտելի։

Բայց երբեմն տեղի են ունենում ընտանիքի և անհատների համար այլ դրութիւններ—երբ հայրենիքի գաղափարը որպէս և ինքը հայրենիքը սկսում է նսեմանալ, կորցնել իր հմայքը, իր քաղցրութիւնը, իր արժէքը։

Այդ այն ժամանակ, երբ հայրենիքի և ընտանիքի համար այդ երկրում խախտւում են ապրելու դրական այդ պայմանները, երբ նրա կեանքն ու ապրուստը այլ ևս չեն ապահովւում նրա ամենափոքր և սահմանափակ պահանջներին, երբ նրա աշխատանքը, քրտինքն ու վաստակը չեն գտնում գործադրութեան ասպարէզ այնքան, որ նա կարողանար ապրել իր հայրենիքում։

Այդ շրջանում է ահա, որ խախտւում է անհատի մէջ հայրենիքի հմայքը և նա փնտռում է իր համար մի այլ հայրենիք, մի տեղ, մի երկիր, ուր ապահովւած լինէր մարդիս ամենատարրական պահանջներն ու կարիքները։

Եւ ահա սկսւում է գաղթը, սկսւում է նոր հայրենիք, մի ուրիշ աւելի լաւ հայրենիք փնտռելու տենչը, բաղձանքը։

Դժբաղդաբար, հասարակական կեանքի ժամանակակից պայմանները, տնտեսական փոփոխուող հանգամանքները, որպէս և երկիրների քաղաքական դրութիւնը այժմ, աւելի քան երբ և իցէ, ստիպում են անհատին, ընտանիքներին նոր հայրենիքներ փնտռել, աւելի բաղդաւոր հայրենիք ստեղծել իրենց համար։

Այդպէս գրեթէ մի դարի ընթացքում գոյացաւ Նոր-երկիրը՝ Ամերիկան, Աւստրալիան և այն հազարաւոր գաղութները, ուր հին աշխարհից գաղթող միլիոնաւոր ընտանիքներ ստեղծեցին իրենց համար նոր հայրենիքներ։

Տւէք անհատին իր հայրենիքում ապրելու տանելի պայմաններ, ստեղծեցէք նրա աշխատանքի գործադրութեան համար լայն ասպարէզներ, ստեղծեցէք նրա կեանքն ապահովող իրաւական նպաստաւոր դրութիւններ և հայրենիքների կեանքը անհատի համար կ՚երկարի։

Հակառակ դէպքում որքան և սիրուն լինի ինքն ըստ ինքեան հայրենիքը, եթէ անհատը այնտեղ սոված է, իրաւազուրկ և չի գտնում իր ֆիզիքական ու հոգեկան ուժերի գործադրութեան համար նպաստաւոր պայմաններ, նա չի սիրի այդ հայրենիքը և կը փնտռի այլ հայրենիքներ։

Թող այս բանի մասին մտածեն մեր հայրենասէրները և այդ ձգտումներով գործող քաղաքական ամեն տեսակի կուսակցութիւնները, որոնք ցանկանում են կապել հային իր հայրենիքի հետ։

Ա. Ա.

---

## (ՆԻԿԻ ՕՐ ԱՋ-ԻՆ)

—

Երբ որ նայում եմ անկեղծ պարզամիտ
քո վճիտ դէմքին
Եւ այդ մանկական պայծառ միամիտ
խելօք աչերին,
Ասա, իմ սիրուն, ինչու է սիրտս
լեցւում անհուն բարձր յոյզերով,
Ինչու իմ հոգին ողողւում է
ազնիւ խոհերով։
Ինչպէս արեւը, որ կեանք է տալիս
թառամած ծաղկին,
Եռանդ ու աւիւն վհատ թռչնակին,
Ինչպէս լուսինը, որ փայփայելով
Ոսկեզօծում է մռայլ, մօրող
սեւուկ ամպերին,
Այնպէս էլ, սիրուն, հոգիս է փայլում,
երբ որ պատահմամբ
Նայում եմ երբեմն քո պարզ ու յստակ
խելօք աչերին։

ՊՐՕԼԵՏԱՐ

digitised by A.R.A.R.@

## ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

Աշխատաւոր, ճնշուած և միևնոյն ժամանակ անտէրութեան մատնուած գիւղական դասակարգի շարժումը, որ ծաւալուած է ամբողջ երկրագործ Ռուսաստանում, արդիւնք է այդ դասակարգի ծայրայեղ թշուառութեան, անտեսական քայքայման, սովատանջ վիճակի։

Նոյնպէս թշուառութեան, նոյնպէս սովամահ լինելու է վտանգուած Անդրկովկասի բոլոր ազգութիւնների գիւղացիութիւնը. այդ պատճառով էլ վերջնիս մի մասը, Ռուսաստանի իր դարդոտ եղբայրակիցների նման, վերջերս հրապարակի վրայ էր դրել հողային հարցը. մի տեղ հողազուրկ գիւղացիութիւնը բուռն կերպով շարժւեց —ապագայում բարեկեցիկ կեանք ստեղծելու յուսով՝ թէպէտ այդ շարժումը դպւեց թնդանօթներով, մի այլ տեղ միայն խուլ արձագանք գտաւ բողոքի ձայներ լսւեցին։ Անդրկովկասի հայ և թուրք գիւղացիութիւնը թէպէտ և նոյն թշուառութիւնների է ենթակայ, սակայն անմասն մնաց գիւղացիական շարժումներին, որովհետև զբաղուած էր անմիտ կռիւներով. հայ գիւղացիութիւնը կռիւ էր մղում հարևան նոյնպէս թշուառ, նոյնպէս հողազուրկ՝ կալուածատէրերի ձեռքին ստրուկ մնացած թուրք գիւղացիութեան դէմ՝ պաշտպանելու իր անձը, պատիւը և գոյքը։

Հող, հող և հող է պահանջում ամենուրեք գիւղացին. և այդ պահանջը նոր չէ մեր երկրի համար. սակայն այժմ աւելի թափով աւելի զօրեղ արտայայտութեամբ է երևան եկել. Նա հողային բաւարարութիւն է պահանջում կառավարութիւնից, կալուածատէրերից։

Պետութիւնը պէտք է շտապի արքունական հողերից բաժին հանել հողազուրկ և սակաւահող գիւղացիներին և դադարի գաղթականութիւններ հիմնել մեր սակաւահող երկրում։

Կալուածատէրերը օր առաջ պէտք է շտապեն բաւարարութիւն տալ ժողովրդի այն դասակարգին, որի աշխատութեանց պտուղն է նրա ամբողջ կարողութիւնը։

Սակայն ի՞նչ պէտք է անեն իբրև մէկ մէկ կալուածատէրեր հանդէս եկող մեր վանքերը, եթէ չեն ուզում, որ անարդարութեանը վերջ դնելու համար հայ գիւղացին ևս կտրուկ միջոցների դիմէ, մի դասակարգ, որ դարեր շարունակ վանքերին ու վանքականներին սնուցել, պահել, պահպանել է և իր կամաւոր նուիրատուութիւններով հարստացրել է նրանց։ Ճիշտ է, եղել են ժամանակներ, որ մեր վանքերը ժողովրդական աղէտների ժամանակ օգնութեան են հասել, չեն խնայել իրենց միջոցները հօտի բարօրութեան համար, սակայն քաղաքական ներկայ պայմաններում մեր հոգևոր բարձր իշխանութիւնը պարտաւոր է աւելի շրջահայեաց լինել՝ տեսնելու այն ողորմելի անտեսական կացութիւնը, որի մէջ է գտնւում ներկայումս իր գիւղացիութիւնը, պէտք է նա ի նկատի ունենայ՝ Ռուսաստանի և Վրաստանի հողային շարժումը, երբ սովատանջ գիւղացին անխնայ սկսեց այրել, կացիններով և փայտերով աւերել, քարուքանդ անել այն ամենը, ինչ որ կալուածատէրերինն էր և օր առաջ բարւոքել իր գիւղացու հողային վիճակը. նա պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնէ իր կալուածների վրայ և ծրագիր մշակէ, թէ ինչպիսի քաղաքականութեան պէտք է հետևի իր կալուածների նկատմամբ։

Ցանկալի է, ո՛ր գէթ այժմ տարիներ շարունակ գիւղացիների և Մայր Աթոռի եկամուտները վերջին ծայր անկման հասնող մեր հոգևոր բարձր իշխանութեան անտարբերութեանը վերջ տրուի և այսօր, երբ երկրի կալուածատէրերը՝ զգալով իրենց վիճակի խախուտ լինելը՝ կառավարութեան միջոցով կամ գիւղացիութեան արած գնումներով աշխատում են խաղաղացնել ժողովրդին, մեր հոգևոր իշխանութիւնը այսպիսի կրիտիքական ժամանակներում իր ահագին կալուածներից միմիայն մի քանի հազար ռուբլի ստանալով չբաւականանայ[1]). Նա պարտաւոր է կալուածների եկամուտները բարձրացնել, որի համար անհրաժեշտ է վանքապատկան հողերը մշակող գիւղացիութեան արդիւնքը բարձրացնել, ամեն կերպ աշխատել բարւոքելու այդ աշխատաւոր դասակարգի վիճակը։

Ներկայ դրութիւնը հայ ժողովրդին յուսահ

[1]) Ռուսաստանում հայ եկեղեցին ունի ընդամենը մօտ 175,000 դ. հող, որից ստացւում է տարեկան մօտ 110,000 ռ. զուտ արդիւնք, այսինքն իւրաքանչիւր դեսեատինից 63 կոպ.

«Արշալոյս» 1905 թ. 32 և 33 համարները։

digitised by A.R.A.R.@

առութեան կհասցնէ. նա մինչև այսօր ամենայն հաւատով յանձնել է իր ունեցած չունեցածը հոգևոր իշխանութեանը, բայց այդ իշխանութիւնը 20-րդ դարում անընդունակ է հանդիսանում կառավարելու իր ստանձնած գործը։

Գ. Գ.

---

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

—

Էջմիածնի մեր հոգևոր բիւրոկրատները, խորհրդակցութեամբ և գործակցութեամբ Ճեմարանի մի քանի ուսուցիչների, առաջիկայ մայիսին Էջմիածնում դպրոցական համագումարի են հրաւիրում։

Ո՞ւմը։

Մի քանի ուսուցիչների, մի քանի հոգաբարձուների, թեմական բոլոր առաջնորդներին և գլխաւորապէս Ճեմարանի ուսուցիչներին։

Դրանց մասնակցութեամբ և խորհրդակցութեամբ պէտք է լուծուեն դպրոցական կնճռոտ, բարդ և պատասխանատու բազմաթիւ խնդիրներ։

Մենք ասում ենք՝

Այդ եղանակով ընտրուած և հրաւիրուած մի կազմ անկարող է ցանկալի լուծում տալ մեր դպրոցական, կրթական և տնտեսական վիրլին ստրճանի կնճռոտ խնդրին։

Այդ կարծիքին են բազմաթիւ հայ ուսուցիչներ, հայ մամուլի և հայ ժողովրդի մեծագոյն մասը։

Եւ դրանք ցանկանում են, որ այդպիսի մի առաջնակարգ խնդրի համար Էջմիածինը նշանակի ընդհանուր ընտրութիւններ ամէն թեմերում այնպիսի հաշւով, որ իւրաքանչիւր 20,000 հայ բնակչութիւն ունենայ մի ներկայացուցիչ, որ այդ եղանակով ընտրուած պատգամաւորները գընան Էջմիածին եւ, ուղիղ ազգի կողմից ընտրուած Հայրապետի հետ, խորհրդակցեն մեր դպրոցական եւ կրթական գործը կանոնաւորելու եւ նրան հաստատ հիմքերի վրայ դնելու մասին։

Նրանք ասում են՝

Ժողովուրդն է դպրոցներ պահողը, ուստի նրա կարծիքը պէտք է հարցնել։

Նրանք ասում են՝

Դպրոցը ժողովրդի համար է, ուստի պէտք է ժողովրդին հարցնել թէ՝ ինչպիսի դպրոց է նա ցանկանում իր զաւակների համար։

Նրանք հաւատացած են,

որ Էջմիածինը այս ցանկութիւնը կհամարի արդար, իրաւացի և իսկոյն կ'հրամայի առաջնորդներին այդ տեսակ ընտրութիւններ նշանակել։

Նրանք ցանկանում են՝

Որ մեր գաւառների հայ ազգաբնակութիւնը՝ և ուսուցիչները սկսեն այս կարծիքի վրայ, որ ժողովուրդը յայտնի Էջմիածնի բիւրոկրատներին իր կամքը։

Դրա համար պէտք է, որ հայ ժողովուրդը ամեն կողմից դիմի իր սիրելի Հայրապետին, հաւատացած լինելով, որ նա կ'իրագործի իր հօտի այս արդար ցանկութիւնը։

Այս նպատակով ապրիլ 7-ին Թիֆլիզում կայացաւ մի ժողով՝ հայ ուսուցիչների, հոգաբարձութեան և ժողովրդի մասնակցութեամբ, և ժողովը յայտնեց իր այս ցանկութիւնը։

Թող ամեն կողմից ժողովուրդը դիմի Հայրապետին։

Նա կ'յարգի ժողովրդի ցանկութիւնը։

Ուրեմն դիմեցէք, քանի դեռ ուշ չէ։

ՄԻ ՀԱՅ ՌՍՍԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉ

---

Ո՜հ, ինչ սիրուն կանաչ գարուն
Եկաւ փոթթեց սարերուն,
Դաշտ ու լեռներ ալ ու կանաչ,
Ախ, դու բարով գաս գարուն։

—

Էսօր էքուց դէպի սարը
Կ'ելնենք շարան ու շարան,
Տաւար, ոչխար, հարս ու աղջիկ
Հետներս առած, ջան գարուն։

—

Բայց մեր սրտերն էլ չեն նման
Ամեն տարուայ գարունքին,
Վշտաթաթախ, կտրած հոգով
Կը ողջունենք սարերին։

ԱՐԷՍ.

---

## Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ԵՒ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀՈՂԵՐԸ

—

Աղբիւրների պակասութեան պատճառով անկարող լինելով մեր վանքական հողերի վրայ ապրող բոլոր գիւղացիների մասին որեւէ ճշգրիտ տեղեկութիւն հաղորդել, առայժմ ստիպուած ենք մի քանի խօսք ասել Էջմիածնի սեպհականութիւն համարուած գիւղերից ամենամեծի և ամենից աւելի արդիւնաբերի, աւելի տուրքեր և հասոյթներ մատակարարող Վաղարշապատի մասին, թողնելով միւսների մասին մի այլ անգամի, որով և հետաքրքրուող հայ հասարակութիւնը մասամբ գաղափար կըկազմէ մեր կալուածների անմխիթար դրութեան մասին։

Տասը տարուց աւելի կլինի, որ Վաղարշապատի հասարակութեան հողազուրկ մասը, որ բաւական մեծ տոկոս է կազմում, ամենայն տարի շարունակ այգետեղ, տնատեղ է խնդրում Սինոդից իր ընտրած հաւատարմատարների միջոցով։ Սինոդը փոխանակ գործի հետ մանրամասն ծանօթանալու և ժողովրդի արդար պահանջին գոհացում տալու, իւրաքանչիւր անգամ հողով ապահովեցրել է գիւղի այս կամ այն առաջաւոր, նիւթականապէս ապահովուած անհատներին և զրկել բոլորովին թշուառ, տնատեղ և այգետեղ չունեցողներին ու այդպիսով թշնամացրել հասարակութեան մեծ մասը իր դէմ։

Տարիներ շարունակ կրկնուող դիմումները այս տարի դարձեալ կրկնուեցին նախկին ձևով։ Սինոդն այս անգամ եւ, ինչպէս երեւում է, չի պլանաւորել իր նախկին քաղաքականութեանն հետեւել. դեռ մինչև օրս չի բարեհաճել ժողովրդին գոհացում տալու. նորից սկսել է առանձին անհատների, ժողովրդից անպայման ապահովների խնդիրներին բաւարարութիւն տալ՝ յատկացնելով այնքան և այնպիսի հողեր, որ սաստիկ շարժել է ժողովրդի արդար զայրոյթը։ Լսում է, որ հոգևոր բարձր իշխանութիւնը որոշել է վարձատրել ճեմարանի ուսուցիչ Ց. Յովհաննիսեանին, նրա Վեհարանին մատուցած ծառայութիւնների համար հեհւսից մինչև երեք խալուար ամենաընտիր հողատեղով. տնատեղ արդէն առաջ էր տրուել։

Հոգևոր իշխանութեան այս ձևի վարձահատոյց լինելուն խիստ հակառակ է ժողովուրդը, որովհետեւ Ց. Յովհաննիսեանը արտաքոյ կարգի մի գործ չէ կատարել, որ պէտք լինէր հասարակութիւնից զատել և բացառիկ կերպով վարձատրել այգետեղով։ Հասարակութեան անդամներից մէկին այսպէս բացառիկ կերպով վարձատրել սաստիկ կատաղեցրել է Վաղարշապատի հասարակութեանը, մանաւանդ երբ վերջինս լսեց, որ յատկացրած է այն հողից, որի համար մի քանի անգամ իրեն բաց է ի բաց մերժել են։

Հասարակութիւնը դէմ չլինելով հասարակական այս կամ այն գործիչի վարձատրութեան սկզբունքին, պահանջում վարձատրել այլ կերպ, բայց ոչ հողով, և եթէ այդպիսիները իրենց հասարակութեան անդամ են համարում և նախանձախնդիր ժողովրդի տնտեսական առաջադիմութեան՝ հաւասարութեան և արդարութեան սկզբունքին, պէտք է իրենց ձայնը միացնեն հասարակութեան ձայնին և միահամուռ պահանջ դնեն սինոդի առաջ։

Մենք ինքներս էլ սկզբունքով դէմ չենք աշխատաւորի վարձատրելուն, սակայն հայ ազգի թշուառ կացութիւնը, մանաւանդ վերջին տարիներում, առաջ բերեց անձնազոհ, անձնանուէր գործիչների ահագին կոնտինգենտ ժողովրդի բոլոր խաւերից։ Միթէ մեր հոգևոր բարձր իշխանութեանը ծանօթ չէ կալուածական խնդրի հրատապ ժամանակը Էջմիածնում ծնունդ առած այն գործունէութիւնը, որ ցոյց տուեցին տեղում պաշտօն վարող մի խումբ մարդիկ, որոնցից մէկ երկուսի անունը գուցէ մի այլ հանգամանքում ստիպուած լինենք հրապարակի վրայ դնել։ Եւ վերջապէս մի՞թէ ռուսահայը վերջին տարիներում անմասն մնաց այս կամ այն կերպ գործելուց։ Մենք կարծում ենք, որ հոգևոր իշխանութեան կողմից դա մի սխալանք է և ինքը՝ բացառիկ պայմանների մէջ դրուած անհատը, կարծում ենք. բնաւ չէր ցանկայ իր հասարակութիւնից բաժանուել և հողի լաւագոյնը և շատը ստանալով՝ զրկել ժողովրդին։

Այժմ, քանի որ հասարակութեան մէջ յուզումներ է տիրում, ժամանակի ոգին նրանց եւ շարժել, արթընացրել է, ապագայ պատասխանատուութիւնից իրեն ազատ կացուցանելու համար, սինոդը պէտք է շտապէր թիւրիմացութիւնները պարզել և օր առաջ գոհացում տար տնատեղ և այգետեղ չունեցող գիւղացիներին։

Հոգևոր Բարձր իշխանութիւնը երբէք չպէտք է մոռանայ հանգուցեալ Գէորգ և Մակար կաթողիկոսների ժամանակակից դէպքերը։ Կարծեմ 1890 թ. էր, որ հողաբաժանութիւն անելու նկատմամբ սինոդի ցոյց տուած անտարբերութիւնը և յամառութիւնը մի կողմից, ինչ ինչ զեղծումներ միւս կողմից այն աստիճան յուսահատեցրին ժողովրդին, որ 25 տուն քիչ էր մնացել ռուսադաւանութիւն ընդունէր. այդ յուզումը մի կերպով խաղաղուեց 1895 թ., երբ հողազուրկ գիւղացիները մօտ 100 դեսեատին վանքապատկան վարելահող ստացան և ամբողջ հողերը նորից բաժանուեցին ըստ 1886 թ. կամէրալնիի։

Սինոդի յապաղումների հետեւանքն այն եղաւ, որ հողազուրկ գիւղացիները մի խաղաղ ցոյց արին Սինոդի դէմ. ժողով գումարեցին այս օրերս և մշակեցին հետեւեալ հարցերը՝ ներկայացնելու սինոդին։

1. Հասարակութիւնից ոչ ոք չպէտք է կապալով վերցնէ Դոլագի և Հնձանափոսի հողերը։

2. Առաջարկել սինոդին, որ Դոլագի և Հնձանափոսի հողերը ժողովրդին իբրև այգետեղ տրուեն։

3. Որոշել, թէ որտեղից պէտք է չափուեն այգետեղերը և տնատեղը և մինչև որտեղը կբաւականացնեն այդ պահանջներին ուսապա, վիճակով միայն, որոշել, թէ ում որտեղից պէտք է տալ։

4. Տան իւրաքանչիւր անդամին առնուազը 10

digitised by A.R.A.R.@

լիար այգետեղ տալ։

5. Տնատեղ և այգետեղ միայն նրանց տալ, որոնք 86 Թուի կամէրալնում գրուած են։ Ոչ որի առաւելութիւն չտալ ընդհանուրի նկատմամբ։ Եթէ կլինեն անձնաւորութիւններ, որոնց երախտապարտ կզգայ հասարակութիւնը, թող վարձատրէ այդպիսիններին դրամով և ոչ հողով։

6. Ժողովրդի ընտրեալ հաւատարմատարների ցուցմունքներով և վկայութեամբ պէտք է տրուի այգետեղեր և տնատեղեր, որպէս զի նախկին անգամուայ նման անարդարութիւններ առաջ չգան [1]։

7. Այգետեղ և տնատեղ ստացողները, առանց ծառեր տնկելու, շինութիւն անելու, իրաւունք չունեն ծախելու և այն էլ՝ ստանալուց 10 տարի յետոյ։

8. Շողակաթ վանքի հողերը յանձնել Վաղարշապատի երկսեռ դպրոցներին և վանքը ծխական եկեղեցի դարձնել, ի նկատի ունենալով, որ Մայր Աթոռը յիշեալ վանքից բնաւ չի շահուել. օգտուել են միայն անհատներ [2]։

9. Նախկին 5 հաւատարմատարների վրայ աւելացնել նորից երեքը, որպէս զի 8 հոգով վարեն ժողովրդի յանձնած գործը։

Հին այգետէրերը սոյն հասարակական վճռին չեն համաձայնել ստորագրել. և այդ պարզ է թէ ինչու համար, որովհետև նրանց համար ցանկալի չէ, որ Հնձանախոսի և Դօլագի վարելահողերը այգետեղ դառնան։ Վաղարշապատի փոքրամասնութիւն կազմող այս ապահովուած տարրը մինչև օրս էլ աշխատել է խանգարել զրկուած մեծամասնութեան ձեռնարկութիւնը, որովհետև իր շահերին ձեռնտու չէ. սակայն ի նկատի ունենալով, որ յուզուած ամբոխի առաջը բոլորովին առնել չի լինի, աշխատում է սինօդի ցանկութեան համաձայն Ղանր կոչուած հողերը տալ, որոնք մեծ անյարմարութիւն են ներկայացնում ջրելու տեսակէտից և միայն շատ երկար տարիներ են հարկաւոր (ժողովրդի ասելով մօտ 20 տարի), որ ժողովուրդը կարողանայ արդիւնք ստանալ, մինչ դեռ Դօլագի և միւս տեղերի հողերը, որ ուզում են բացառիկ անհատների տալ, հէնց այժմ, առանց այգի տնկելու, ահագին արդիւնք են տալիս։

Այժմ, ինչպէս լսում ենք, սինօդը վերջապէս որոշել է զիջել և հարց է տուել հասարակութեան հաւատարմատարներին թէ արդեօք խնդրատուներից ովքեր են այժմ այստեղ ապրում, ովքեր ոչ, որպէս զի գիւղից բացակայողներին զրկէ տնատեղ և այգետեղ տալուց։ Ա՛յ, ձեզ զիջողութիւն. դարձեալ ժողովրդի դժգոհութեան մի պատճառ։ Ի՞նչու սինօդը չի ուզում լսել ժողովրդի հաւատարմատարներին, չէ՞ որ կարող է պատահել, որ չքաւոր, հողից, տնից զրկուած մի ընտանիք իր օրական պարէնը հայթայթելու համար ստիպուած է եղել այս օրերս օտարութեան դիմել. այդպիսիններից շատերը, կարծում ենք, անմիջապէս գիւղ կվերադառնան և մշտապէս կըկապուեն հողի հետ, հէնց որ լսեն իրենց համար աւետաբեր լուրը, թէ այգետեղ է տրւում։ Զրկել կարելի է միայն այնպիսիներին, որոնք ընտանիքով երկար ժամանակ բացակայել են Վաղարշապատից, ընդարձակ առևտրական կամ այլ ձեռնարկութիւններ ունեն օտար տեղերում և դժուար թէ գիւղ վերադառնան, եթէ նոյնիսկ տնատեղ և այգետեղ տրուի նրանց։

Այս առաջին սխալ քայլն անելուց յետոյ, սինօդը իրեն թոյլ տուեց մի նոր սխալ ևս գործել. դարձեալ առանց լսելու ժողովրդի ընտրեալ հաւատարմատարներին, որոշել է իւրաքանչիւր ծխի 40-ական լիտրի տեղ տալ՝ առանց ի նկատի առնելու, թէ այս կամ այն ծուխը քանի հոգուց է բաղկացած։ Ահա ձեզ ժամանակակից արդարութիւն, ահա ձեզ նոր ձևի հաւասարութիւն։ Երկու հոգուց բաղկացած մի ընտանիք նոյնքան հող պէտք է ստանայ, որքան և 10—15 հոգուց բաղկացածը։

Ահա այս և մի շարք ուրիշ հանգամանքներ ստիպեցին ժողովրդին իր պահանջներն աւելի ընդարձակել. պատրաստւում է մի նոր պահանջագիր սինօդին յանձնելու, որը, ինչպէս երևում է, եթէ նախկինների հետ միասին շուտափոյթ իրենց լուծումը ստանան, նորանոր բարդութիւններ կառաջանան. ահա այդ պահանջագրի կէտերը։

1. Ի նկատի ունենալով անցեալ տարիների անբերրիութիւնը և ժողովրդի տնտեսական քայքայումը, խնդրում է 1905 թ. չվճարուած ծխահարկը և այգեհարկը, այլ և վրայ հասած 1906 թուի նոյն հարկերը չպահանջել երբէք։

2. Այսուհետև տուրք վերցնել 8—10-ից մէկը՝ հակառակ մինչև այժմ եղած 5-ից մէկի, իսկ դարման, վանքապատական միւս գիւղերի նման, բնաւ չպահանջել իբրև տուրք։ .

Մօտիկ ծանօթ լինելով Վաղարշապատի տնտեսական վիճակի և ներկայ յուզումներ առաջացնող շարժառիթների հետ և, ի նկատի ունենալով այն մի շարք սպասելիք բարդութիւնները, որոնք արդիւնք կլինեն մեր հոգևոր բարձր իշխանութեան այսուհետև գործելիք յամառութեան և սխալների, խորհուրդ ենք տալիս, քանի դեռ ուշ չէ, կամ վաճառել գիւղացիներին Վաղարշապատի ամբողջ հողերը ու մի քանի, թէկուզ 50 և աւելի տարիների ընթացքում, հաւաքել տարէց տարի որոշ գումար և կամ ժողովրդի վերև յիշուած ա-

[1] Երեմիա եպիսկոպոսի տեղապահութեան օրօք շատ այդպիսի անարդարութիւններ առաջ եկան. հողեր բաժանեցին գլխաւորապէս սինօդի ծառայողներին և սրբազան հայրերի ծառաներին ու բարեկամներին, որոնց մեծամասնութիւնը նոյնիսկ տեղացի չէր։

[2] Վեհափառ Հայրապետը, յարգելով Վաղարշապատցիների խնդիրը, համաձայնել էր Շողակաթ վանքը ծխական եկեղեցի դարձնել և հողեր, տեղական դպրոցներին յատկացնել։ Սակայն ինչ որ հոգևոր հայրեր իրենց վարդապետ վանահօրը պաշտպանել են Վեհափառի առաջ և ժողովրդի յարգուած խնդիրը մերժուել է։

digitised by A.R.A.R.@

առաջարկները առանց բացառութեան ընդունել, միայն մի այլ պատճառով հեռաւոր վտանգն ի նկատի ունենալով՝ խորհուրդ ենք տալիս Զօրանքեարի և Քիօլանլուի սահմանակից վանքապատկան երկու դօռուղները տալ Վաղարշապատի վերաբնակիչներին կամ գաղթականներին՝ նոր գիւղ հիմնելու և կամ ծախել Վաղարշապատի հասարակութեանը իբրև արօտատեղի։

Ահա այս երկու միջոցներով միայն կխաղաղուի ժողովրդի յուզուած միտքը և միայն այդ ճանապարհով կարելի կլինի ելք չարիքի առաջն առնել։

ՀԵՏԵՒՈՂ

---

## ԳԻՒՂԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

### VI

Սանահեր!

Հարուստի և աղքատի կռիւը, սանահեր, նոր չէ. այդ կռիւը հին, շատ հին է. նա սկսել է այն օրից, որ օրից աշխարհում առաջ են եկել ուժեղները և թոյլերը։

Միշտ էլ ուժեղը ճնշել է թոյլին. և հէնց այդ ճնշելումն է, որ նա ոյժ է ստացել, որովհետև ամեն բան փորձւում է գործի մէջ. երբ իմ մի փորձը յաջող է գնացել, ես փորձել եմ երկրորդ անգամ, երրորդ, չորրորդ այնքան, մինչև որ դա դարձել է իմ մէջ մի անհրաժեշտ վարժութիւն, մանաւանդ՝ մի օգտաւէտ վարժութիւն։

Առաջ, շատ առաջ, երբ աշխարհում ամեն բան ոյժով, կոպիտ ոյժով էր առաջ գնում, ոյժ ու հարստութիւն միևնոյն բանն էր. ով ուժեղ էր նա և հարուստ էր, ով հարուստ՝ նա և ուժեղ պէտք է լինէր։ Բայց այդ ժամանակները գնացին, անցան. և հիմա ուրիշ բան է ոյժ, ուրիշ բան հարստութիւն։

Այժմ, սանահեր, ամենամեծ ոյժը միութիւնն է. թող լինեն մարդիկ թոյլ, աղքատ, բայց, եթէ նրանք մի բանի համար միանում են, նրանք դառնում են ուժեղ. ի զուր չ'ք դուք ասում «գեղ կանգնի՝ գերան կ'կոտրի». այդ բանը դուք փորձով էք հասկացել. և ահա դրա մէջն է թոյլերի, աղքատների փրկութիւնը։ Այդ բանը շատ լաւ են հասկացել հարուստները. և այժմ նրանք որքան և հարուստ են, բայց, վախենալով աղքատների միութեան ոյժից, նրանք էլ սկսել են միանալ՝ կռւելու համար աղքատների, թոյլերի դէմ։

Բայց մի վախեցէք դուք, աղքատներդ այդ բանից. դա ամենագլխաւորն է. ձեր ոյժը նրանումն է, որ դուք շատ էք. իսկ շատութիւնը մեծ ոյժ է, երբեմն անխորտակելի մեծ ոյժ. —որպէսզի դուք կարողանաք կռւել հարուստի ոյժի դէմ, ձեզ հարկաւոր է միանալ որքան կարելի է շատ թւով, և, եթէ հնարաւոր է, բոլորով։

Եթէ դու, սանահեր, աշխարհ տեսած, ման եկած, կարդացած մարդ լինէիր, դու կ'տեսնէիր, որ լուսաւոր այն երկիրներում, որի անունը Եւրոպա, Ամերիկա է, ամեն բան այդտեղ առաջ է գնում միութեամբ, ընկերութեամբ։ Հող պէտք է առնել, տեսնում ես, իսկոյն մարդիկ միանում են, իրանց կոպէկները բերում և այդ կոպէկներից հազարներ է դառնում և իսկոյն գնում են հող. մեքենայ, գործիքներ են հարկաւոր — դարձեալ միանում են և միասին բերել տալիս. խանութ, ապրանք է հարկաւոր, միասին փող են վեր գալիս, միութիւն կազմում և բացում են խանութ. ճանապարհ պէտք է շինել, ուսումնարան հիմնել, գիրք հրատարակել, մի դատ պաշտպանել՝ ամեն տեղ միութիւն, ամեն տեղ ընկերութիւն։ Մի խօսքով լուսաւոր երկիրներում, եթէ առանձին մարդը ցանկանում է լաւ ապրել, իրաւունք ձեռք բերել, իր շահերը պաշտպանել, նա իսկոյն ման է գալիս և գտնում է հարիւրաւոր հազարաւոր իրա նմաններին և, դրանց հետ միացած, անում են այն, ինչ որ իրենց համար օգտաւէտ է։

Եւ այսպիսի միութիւնները այժմ այնպիսի ոյժեր են, որի առաջ խոնարհւում են ամենամեծ հարուստները, իշխանաւորները, նոյն իսկ թագաւորները։

Այո, սանահեր, աղքատի, թոյլի համար հիմա՝ մեր ժամանակում լաւ ապրուստի ուրիշ միջոց չ'կայ՝ քան միանալ և միութեամբ գործելը։

Սա է ձեր փրկութիւնը, մանաւանդ, եթէ այդ միութիւնը կատարւում է խելացի, կշռած և եռանդով։

Իսկ խելացի, կշռող լինելու համար անհրաժեշտ է, որ դու լինես գրագէտ, կարդալ գրել իմանաս, քո հակառակորդին լաւ ճանաչես, որ քեզ չ'խաբի։ Իսկ դրա համար հարկաւոր է, որ դու ունենաս շատ, որքան կարելի է շատ ուսումնարաններ, դպրոցներ։

Ուսումը, գիտութիւնը քո միւս ձեռն, զօրա-

digitised by A.R.A.R.@

տոր ոյժն է։

Միութիւն և գիտութիւն, ընկերութիւն և ուսում—ահա աղքատի, թոյլի, տգէտի ամենամեծ զէնքերը, նրա բաղդաւորութեան հիմքերը։

Այս անգամ, սանահեր, այսքան։

ՔՈ ՔԱՒՈՐ-ԱՂԱ

# ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Եկատերինոսլավի նահանգի շատ կալուածատէրեր փակում են իրանց տնտեսութիւնները։ Ի՞նչու։ Այս առթիւ «Торг. Пром. Газ.»—թղթակիցը ասում է.

«Շատ են դէպքերը, երբ կալուածատէրերը վերջացնում են իրանց տնտեսութիւնները, ոչ թէ ագրարային—հողային տագնապի երկիւղից, այլ իսկապէս ուրիշ լուրջ պատճառից, ուրիշ խոր համոզմունքից դրդուած.—դժուար և անհնարին է ժողովրդին մօտ կանգնած, բայց ապահովուած կալուածատէրերի համար, խաղաղ ապրել սոված մարդու կողքին։ Այս վերջինը բնականաբար միշտ էլ պէտք է թշնամաբար վերաբերուէ կալուածատէրին։ Անկարելի է իրանց կողքին տեսնել երկրագործ գիւղացուն, որ հողի պակասութեան պատճառով ստիպուած է առնել և հաց և կերակուր անասունների համար և արօտատեղի. սա ոչ թէ ապրում է, այլ սովից ու քաղցից մաշւում է, և դայրոյթ է զգում դէպի նրանք, որոնք շատ հողեր ունեն։

—

«Страна» թերթը յայտնում է, արդեօք ուշ չե՞ն խելքի գալիս կալուածատէրերը։

Մենք կասենք՝ շատ անմտութիւն կլինէր կարծել, որ կալուածատէրերը յիրաւի այդ բարի յօյզերից դրդուած են լիկվիդացիայի ենթարկում իրանց տնտեսութիւնները։ Նրանք շատ լաւ են տեսնում, որ գիւղացին անսահման դայրոյթին հասած, սպառնում է ոչնչացնել «անբարեխիղճ» կալուածատէրերի ունեցածը։—

—

Շուշու գաւառում ռուս զօրքի գազանութիւններն ու աննկարագրելի բարբարոսութիւնները չափ ու սահմանից անցան։—Հեռագիրները ամեն օր մի նոր քստմնելի լուր են բերում։ Առաջ ենք բերում մի կտոր «Ցառաջից». Շուշուց հեռագիր

Շուշի, մարտի 25-ին, 6 ժամ 35 րոպէ։

Գուբիայի սարսափները նսեմանում են Վարանդայի սարսափների առաջ։ Մարտի 20-ին 400 կոզակներ թնդանօթներով՝ Վեվերնի, գաւառապետ Ֆրէյլիխի, հաշտարար միջնորդ Երմօլայեվի և սպայ օսետին Հաջիևի առաջնորդութեամբ ռմբակոծեցին Տող գիւղը։ Փլատակեցին մի քանի տներ, խլեցին 22 հրացան և 900 րուբլի տուգանք։ Անխնայ կերպով տանջեցին գիւղացիներին, որոնցից 15 հոգու մերձ ի մահ։ Մնացած գիւղացիները փախան մերձակայ լեռները և անտառները, թողնելով գիւղը բաղտի բերմունքին։ Գազանացած կոզակները խրախուսուած Երմօլայեվից՝ սկսեցին կողոպտել տները, թալանել այն ամենը, ինչ որ հնարաւոր էր տանել։ Մոխիր դարձրին Մուսայելեանցի տունը։

Ֆրէյլիխը և եռանդոտ Երմօլայեվը կոզակներին ուղեկցեցին Տաղլար, Ազոխ և Սօս, որտեղ տեղի ունեցան նոյն բարբարոսութիւնները։ Խլուած են մի քանի հրացաններ Տաղլարից։ Տներն աւերուած ու այրուած են։ Տակն ու վրայ արեցին ցորենի ու գարու ամբարները, այգիների ցանկապատները, ոտնահար են արուած դաշտերը։

Գազանային ինստինկտները դուրս եկան ամեն մի սահմանից՝ կոզակները բռնաբարեցին կանանց, նոյն իսկ պառաւների ու մատաղ աղջիկների։ Բռնաբարում էին ծնողների ու ազգականների աչքի առաջ, պատկերը զարհուրելի և քստմնելի էր, նկարագրութեան ամեն մի հնարաւորութիւնից դուրս։

Եղան խելագարութեան և անձնասպանութեան դէպքեր։ Զզուած և չըտեսնուած այս սարսափներից ժողովուրդը ծայրահեղ յուսահատութեան մէջ է ընկել։

Ֆրէյլիխը, Երմօլայեվը և Հաջիեվը հանդիսաւոր կերպով հրաժեշտ տուին ժողովրդին և հեռացան կոզակների երգերի ուղեկցութեամբ։ Միւս գիւղերի մասին՝ մանրամասնութիւնները կըհաղորդենք նամակով»։

Համեմատեցէք այդ բոլորը Չինգիզխանի բարբարոսութիւնների հետ և այն ժամանակ կը տեսնէք, որ ոչ մի տարբերութիւն չըկայ։

Այո, երկար տարիներ ու դարեր են անցել միմեանց յետեւից, բայց չինգիզխանական գազանութիւնը դեռ գործադրւում է, դեռ քաջալերւում է և հայ գիւղացիութիւնը այժմ հեծում է նրա ճանկերում։

Մի Երմօլայեվ չի սիրում հայերին և ահա նա կարողանում է իր հակակրանքը այդպիսի բարբարոս ձեւով արտայայտել։

Իսկ պատիւ, արդարադատութիւն—դրանք վաղուց չքացել են մեր աշխարհից։

Այնպիսի դէպքերում, սարերն ու անտառներըն ապաւինուած տարադէր ազգաբնակութիւնը, իր սրտի խորքից միայն մի բողոք կարող է հընչեցնել։

—Թող կորչի այն րէժիմը, որ անպատիժ է թողնում այդպիսի հրէշներին։

digitised by A.R.A.R.@

Իսկ անպատուած, բռնաբարուած կանանց ու կոյս աղջիկների աղի արցունքները միայն սրբագործել կարող են այդ բողոքը։

Եւ այդպիսի սրբագործուած բողոքները վերջ ի վերջոյ պիտի պատրաստեն այն անհեղ պատիժը, որին արժանի են ժամանակակից բոլոր Ջինգիսխանները իրենց հովանաւոր ամբողջ ռէժիմի հետ միասին։

Այնուհետև ստացել են մի շարք հեռագրական տեղեկութիւններ, որոնք նորանոր գազանութիւնների սոսկալի նկարագիրներ են։ Դրանց քննելու համար ոճրագործութեան տեղիքը գնաց մի յատուկ յանձնաժողով պ. Վայդենբաումի հետ, իսկ անցեալ երեքշաբթի նոյն տեղը ուղևորւեց փոխարքայի օգնական գեն. Մալամա։

Ողջ հայութիւնը սպասում է քննութեան հետևանքին, ոճրագործների խիստ պատժին և վնասուածների բաւարարութեանը. եթէ միայն կարող է այստեղ խօսք լինել որևէ բաւարարութեան մասին…

—

Սրանից ուղիղ 36 տարի առաջ Թիֆլիզում լոյս տեսաւ Գրիգոր Արծրունու խմբագրութեամբ «Մշակը», այն ժամանակուայ լիբերալ հովերի, ձգտումների համար կռիւ դուրս եկած հայերէն լեզուով փոքրիկ, մինիատիւր օրգանը։

Նոյն տպաւորութիւնը թողեց մեզ վրայ ապրիլի մէկին, զատկի նախօրեակին լոյս տեսնող «Կայծը»։ Որքան ժամանակակից էր մեզնից 34 տարի առաջ լիբերալիզմի նպատակն ու ձգտումները՝ մեր նեխուած լճացած կեանքի մէջ մի փոթորիկ առաջ բերելու և նոր, թարմ հոսանքներ մտցնելու համար, նոյնքան ժամանակակից է այսօր մեր քաղաքական հասարակական բուրժուացած խմորով շաղախուած կեանքի համար, դասակարգային կռւի նշանաբանով հրապարակ եկած «Կայծը», իր հանրամարդկային սկզբունքներով, աշխատանքի թագաւորութեան խրոխտ հրաւէրով։ Եթէ սրանից 34 տարի առաջ լիբերալիզմը կարօտ էր Արծրունիների նման բնաւորութիւնների և տաղանդների, այժմ սոցիալական-դեմոկրատ սկզբունքները այնքան ժողովրդականացած են, որ կարելի է մի թերթ առաջ տանել նոյն իսկ առանց խոշոր տաղանդների, այլ հաւատացեալ զինւորների գաղափարական ֆանատիկոսութեամբ և կազմակերպուած կուսակցութեան միահամուռ ույժերով։

Ողջունում ենք «Կայծի» հրապարակ ելնելը, որովհետև գիտենք, որ նրա քարոզած գաղափարները կըգտնեն պարարտ հող մեր իրականութեան մէջ, երբ ժամերով տառապում է պրօլետարիատը և իր համար անկեղծ պաշտպաններ և ուղեցոյցներ է փնտռում։

Ամենայն լրջութեամբ և անկողմնակալութեամբ մենք կըհետևենք մեր նոր ընկերի քայլերին, վերապահելով մեզ քննադատական վերաբերմունք դէպի նա այն բոլոր դէպքերում, երբ կ'տեսնենք նրան իր ոգեւորութեան մէջ շեղուած կեանքի պարզաբանութեան գիտական և գործնական ճանապարհից։

Թիֆլիզի հայ գրական-հասարակական շրջանում կազմակերպւում է մի ընկերակցութիւն, որ մօտ օրերում հրատարակելու է «Օրեր» անունով հայերէն օրաթերթ՝ արմատական-դեմոկրատ ուղղութեամբ։

—

Ամսոյս 6-ին Թիֆլիզ քաղաքի և Թիֆլիզի ու Բորչալուի գաւառների ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցրած է «Արշալոյս» օրաթերթի հրատարակութիւնը՝ մինչև պատերազմական դրութեան վերացումը, իսկ թերթի խմբագիրը Ց. Մանանդեանը դատի է ենթարկուած։ Թերթի դրասենեակը յայտարարում է, որ բաժանորդներին բաւարարութիւն տալու եղանակի մասին կըյայտարարուի առանձին։

—

«Հովիւ» հոգևոր-բարոյական և այլ շաբաթաթերթը վերջապէս իր գոյնը դուրս տուեց։ «Ս. Էջմիածնի համագումարի մասին» առաջնորդողում խմբագրութիւնը հետևեալ նշանաւոր միտքն է յայտնում.

«Ասացինք, որ մեր ծխական և թեմական հոգևոր դպրոցների մանրամասն որոշ ծրագիրը հիմնուած պիտի լինի կրօնական-բարոյական դաստիարակութեան ու կրթութեան վրայ։ Այս ուղղութիւնը միայն կրօնական առարկաների ծրագրում չ'պիտի փայլի, այլև (լաւ լսեցէք!) դպրոցների մէջ աւանդւող բոլոր առարկաների ծրագիրներում»։

Խոստովանած, այսպիսի կրօնական-բարոյական աբսուրդի չի հասել նոյն իսկ Տէր-Թովիկը և Կ. Պոբեդոնոսցև. ինչպէս ռուսերէն ասում են договорился… Մեզ միայն զարմացնում է մի բան. թէ ինչպէս է համաձայնւում նոյն թերթի մէջ նոյն խնդրի մասին այլ հայեցակէտ ունեցող Ս. Մ-ն իր յօդուածները զետեղել։

Երկուսից մէկը՝ կամ խմբագրութիւնը չի կարդում Ս. Մ-ի գրածները, կամ Ս. Մ. արհամարհում է խմբագրականները, որով ստացւում է «Հովիւի» էջերում կատարեալ մի շիլա փլաւ։

## ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

Թէ ե՞րբ և ինչպէս օգնել

—

Մեղուաբուծութեան գլխաւոր առարկան ինքը մեղուն է, ուստի նրա կեանքը պէտք է լաւ ուսումնասիրել։

Մեղուն աշխատանքի մեծ ուժ է—անխոնջ մշակ

digitised by A.R.A.R.@

է, նա մարդուս համար ամենաօգտակար արարած է. նա զանազան հոտաւէտ ծաղիկներից համեղ, անոյշ մեղր և իրանից էլ արտադրում է հոտաւէտ մեղրամոմ, որոնց ամբարում է իր մեղուաբնում կամ փեթակում։

«Մեղուի օգնութեամբ, ասում է պրոֆ. Ցէսելսկին, ամենաչքաւոր մարդը, կանոնաւոր խնամելուց և աշխատասիրութիւնից, կարող է հարստութիւն ձեռք բերել։ Մեղուն ներկայանում է այնպիսի մի աշխատաւոր ուժ, որն այս ու այն կողմից իր տիրոջ համար բերում է պաշար։ Մեղուի համար գոյութիւն չունի ոչ թագաւորական, ոչ պետական և ոչ կալուածատէրի սահման և, ինչ որ իրան հարկաւոր է, նա բերում է այնպիսի պաշար, որ առանց այն էլ անօգուտ կ'ոչնչանար»...

Մեղուաբուծութիւնը գիւղատնտեսական ամենաօգտաւէտ ճիւղերից մէկն է. նա եւրոպական տէրութիւններում մեծ ծաւալ ունի ընդունած. իսկ Ամերիկայում աւելի ու աւելի. այնտեղ հմուտ մեղուաբոյծեր շատ կան. ինչպէս օրինակ ներկայումս ամբողջ աշխարհում յայտնի մեղուաբոյծ է Ա. Րուտ (А. Рутъ)։ Րուտի աշխատանքը սկզբում ոսկերչութիւնն էր։ Երբ նա մի անգամ իր արհեստով պարապում էր՝ նրա խանութի մօտ իջաւ մեղուի պարս (рой), և որովհետև Րուտը բոլորովին անծանօթ էր մեղուաբուծութեան, ուստի իր ընկերին խնդրեց հաւաքել մեղուներին աման մէջ։ Այս բռնած մեղուի գունդն, որ բախտի բերմամբ թողել էր Րուտի մօտ, մի քանի տարուց յետոյ լաւ պտուղ տուեց։ Րուտը ծանօթացաւ մեղուների հետ գրքերի և մի քանի մեղուաբոյծների խրատների օգնութեամբ։ 15 տարի յետոյ՝ այսինքն երբ պատահմամբ մեղուի գունդն ընկաւ իր ձեռքն, այն օրից նա, հետզհետէ լայնացրեց իր գործունէութիւնը՝ մեղուանոցը մեծացրեց և հիմնեց մեղուաբուծութեան գործարաններ, որտեղ պատրաստւում է մեծ քանակութեամբ մեղուաբուծութեան պարագաներ և երկրի ամեն կողմն ամբողջ վագոններով ուղարկւում է։ Այսպէս մեղուն Րուտին հարստացրեց՝ միլլիոնների տէր դարձրեց, նրան ոսկերչութիւնից ձեռք վերցնել տուեց։

Այստեղ Ռուսաստանում էլ մեղուաբուծութեանը կանոնաւոր կերպով հետևում են. շատ տեղ կան սրան վերաբերեալ ուսումնարաններ, ընկերութիւններ և լոյս են տեսնում մեղուաբուծութեան մասին գրքեր ու յատուկ լրագիրներ։ Եւրոպական Ռուսաստանում և Կովկասում փեթակների թիւը հաշւում է 4 միլլիոնից աւելի՝ 30 միլլիոն րուբլու արժողութեամբ։ Ռուսաստանում մեղրի և մոմի պահանջը մեծ լինելու պատճառաւ էլի ամեն տարի դրսի երկիրներից ներս է մուծւում 8 հազար փութ մեղր 50 հազար ր. արժողութեամբ և հազար փութ մոմ երեք միլլիոն ր. արժողութեամբ։

Մեզ մօտ Կովկասում հաշւում են 800 հազարի աւելի մեղուի փեթակ։ Այստեղի մեղուապահների մեծամասնութիւնը մեղուները պահում է հին, նահապետական փեթակներում—ծառի խոռոչաւոր ամաններում дуплянка։ Ես յիշում եմ Սանահնում, Հաղբատում և Դսեղում իմ տեսած երկու տեսակ փեթակի ձևեր, երկուսն էլ երկարութեամբ մէկ են՝ մօտ մի արշին, մէկը տաշտաձև է, որի երկու խուփը ծածկւում է իրար վրայ. նրանից մեղրը հեշտութեամբ հանում են. միւս տեսակը՝ խոռոչաւոր է՝ մեղրը ետև մասից են հանում. այս փեթակներից մեղրը ստացւում է ցածր տեսակի մօտ 15 ական գրվանքայ. գրվանքան 10 կոպ. արժողութեամբ. գումար 1 ր. 50 կոպէկ։

Մեզ մօտ Ռաճայի գաւառում մեղուները պահում են ծառի խոռոչաւոր ծառի կեղևայ (Кора) ամաններում, բարձրութեամբ 12 վերշոկ։ Մեղուաբոյծը մեղրը ստանալու համար աշնան, հոկտեմբեր, ամսին, փեթակը դնում է մեծ պղինձի (կաթսայ) մէջ և վրան անխղճաբար ջուր է ածում և խեղդում անմեղ օգտակար միջատներին ու տիրանում է ամբողջ մեղրին, մեղրը ստացւում է վատ տեսակի, մի փութ աւելի զամ պակաս, գրվանքան 10 կոպ. արժողութեամբ, գումարն 4 ր.։

Բայց սոցա հակառակ Կովկասում կան գիտուն մեղուաբոյծներ, որոնք օգտակար մեղուներին պահում են սիրուն շրջանակաւոր փեթակներում և ոչ մի մեղու չըսպանելով մեծ օգուտ են ստանում. օրինակ կայ փեթակ, որ տալիս է երեք փթից աւելի՝ լաւ տեսակի մեղր, որի փութն արժէ 9 ր. գումարն է 27 րուբլի։ Այսպիսի մեղուաբոյծը մեղրը ստանալու—հաւաքելու ժամանակ միշտ պատրաստ ունի արուեստական մեղրամոմի թերթեր, մեղրը խորիսխից դուրս տալու գործիքն центрабѣжка և ուրիշներ՝ թէ այս փեթակից մեղրը ինչպէս է ստացւում, սրա մասին մի այլ անգամ կըխօսենք։

Ուրեմն մեղուն շահաւէտ միջատ է, միայն այն ժամանակ, երբ նրա հետ գործ է ունենում գիտուն մեղուաբոյծը. նրան պահելու համար շատ ծախս չէ հարկաւոր։ Մեղուն պահանջում է մեղուաբոյծից գիտակցութիւն, որով խնամեն իրանը։

Մեղրը լաւ գին ունի, եթէ նրան գիտուն մեղուաբոյծի ձեռքն է դիպել։ Մեղրը գործ են ածում ուտելու՝ պրիանիկների (հացախմորուկներ) քաղցրավենիքի՝ մեղրային գինի՝ մեղրային գարեջրի՝ և դեղորէնի համար, իսկ մոմը՝ եկեղեցներում պատկերների առաջ վառելու, դեղատներում և գործարաններում։ Լաւ տեսակի մեղրի փութը Թիֆլիզում արժէ 9 ր., իսկ մոմինը 20—24 րուբլի։

Նոր սովորող մեղուաբոյծները նախ պէտք է սովորեն մեղուի բնական պատմութիւն և ապա ձեռք բերեն մեղուաբուծութեան պարագայքը [1]։ Մեղուի պահելու իրաւունքն ամեն մարդն ունի։ (Свода законовъ X. Т. Ч. I. ст. 401, 403)։

Հարկաւոր է ունենալ մեղուաբուծութեան գրքեր և լրագիրներ։

ԱԲԳԱՐ ՔՀ. ԲԵՐՈՒՋԵԱՆ

1) Թիֆլիզի շերամապահութեան կայարանից կարելի է ձրիաբար ձեռք բերել մեղուաբուծութեան պատկերազարդ պրէյս-կուրանտ.

digitised by A.R.A.R.@

# ԳԱՒԱՌ

## ՊԷՏՔ Է՞ ԶՍՊԵԼ ՎԱՇԽԱՌՈՒՆԵՐԻՆ

—

*Բռնակոթ, Զանգեզուրի գաւառ*

Այո՛, պատասխանում են ամենքը, թէ երիտասարդ, թէ ծեր, թէ գիւղում [illegible] համարուած թերուսը և թէ նոյն իսկ ագէտ գիւղացին. ասում, խօսում են ամենքը, բայց գործ, գործ չը կայ մէջտեղ։

Կարդում ես լրագրներում մեր դրացի վրաց գիւղերի համայնական դատարանի վճիռները ու հիանում. մի տեղ վճռում են պարապ, պորտաբոյծ մարդկանց գիւղից արտաքսել, որպէսզի իրանց անբարոյական կենցաղով չը վարակեն աշխատասէր գիւղացիներին, մի ուրիշ տեղ անբարոյական կնոջն ու տղամարդին հասարակութեան մէջ թքում են, մրում, հինգ-վեց ամսւայ բոյկոտ յայտարարում և սպառնում, եթէ կըշարունակեն, այդ դէպքում գիւղից դուրս կըվռնդեն, մի երրորդ տեղ՝ 12-14 տարեկան երեխաների վճիռը՝ իրանց սուտխօս և գող ընկերների վերաբերմամբ. և այսպէս անվերջ... չըհիանալ, չընախանձել չի կարելի։

Ո՞վ է անում այս բոլորը, համոզուած ենք, որ վրաց գաղափարական երիտասարդութիւնը. Ինչու նոյնը չի անում և մեր գիւղացի երիտասարդութիւնը մեր գիւղերում.

Ահա այս հարցն է, որ դրդեցնում է մեզ, որա մասին է, որ ուզում ենք մի քանի խօսք ասել։

Դրա պատճառները շատ են, որոնցից մի քանիսը միայն կըյիշեմ։ Նախ՝ մեր գաւառում չըկայ կրթուած երիտասարդութիւն (միջնակարգ և համալսարանի կրթութեամբ), չըկան և դպրոցներ, եթէ չըհաշւենք մի քանի տասնեակ տարրական դպրոցներ իրանց անարժան ուսուցիչներով, մեր գաւառում գոյութիւն չունի ոչ թէ միջնակարգ դպրոց, այլ և երեք կամ չորս դասարանեան դպրոց, իսկ մեր գաւառը ունի 150000 բնակիչ։ Չըկայ, ասում ենք, որովհետև չեն երեւում ասպարիզում։ Զանգեզուրցի գիւղացին դրանց երեսը չի տեսնում տարիներով, չի լսում դրանց հեղինակաւոր խօսքը։ Տեղացիներ չըկան, եղածները հազ ու կենտ սիրտ չեն անում գիւղ գալ և իրանց հոգեկան պահանջներին բաւարարութիւն են տալիս մեծ քաղաքների սալոններում։ Մնում են դրսեցիները. նախ՝ դրանցից քչերն են գալիս, երկրորդ՝ շատերը դրանցից իրանց կոչման բարձրութեան վրայ չեն կանգնած լինում, որից և առաջանում է նրանց շուտով համակերպուելը հայ [illegible] և վաշխառուի հետ. ուրեմն ասպարէզը մնում է տեղացի թերուս երիտասարդութեանը, (մեծ մասամբ մտաւոր քիչ թէ շատ պաշար հայթայթած Բագու-Բալախանու հանքերում) իսկ դրանք. ի հարկէ, անկարող են անել այն՝ ինչ պիտի անէր իսկապէս կրթուած երիտասարդութիւնը։ Թերուս և ագէտ երիտասարդութեան մի խոշոր մասը լինելով տեղացի վաշխառուի ու [illegible] որդիք կամ նրանց խընամիները՝ ոչ թէ կռւում են գիւղական անթիւ չարիքների դէմ, այլ յաճախ միանում են վաշխառուի հետ ու աւելի խորամանկ միջոցներով հարստահարում խեղճ ու աղքատ գիւղացուն։

Ուրեմն, էլ ո՞վ պիտի օգնի գիւղացուն, ո՞վ պիտի կռւի տեղական ամենակարող վաշխառուների հետ, որոնք հազար ու մի ծծակներով կատարելապէս քամում են գիւղացուն տնտեսապէս ու բարոյապէս, ո՞վ պիտի հասկացնի գիւղացուն իր իրաւունքները։ Կրթուած գաղափարական երիտասարդութիւնը թող մտնի գիւղը, թող խօսի, հասկացնի գիւղացուն իր իրաւունքները, թող գիւղացուն, այդ ամենից հարստահարուած մասսային, գործով, ոչ թէ խօսքով, ցոյց տան, որ նրա դատը պաշտպանողներ կան, նրա խօսքը լսողներ, նրա դարդին դարման անողներ կան, այն ժամանակ մեր գիւղացիութիւնը ևս ոտքի կըկանգնի և ամենախրոխտ կերպով կըբողոքի, կըկռւի իրան հարստահարողի դէմ և թոյլ չի տայ, որ վաշխառուն ամենասանձարձակ կերպով անի այն, ինչ որ՝ անում է այժմ։

Յոյս ունենալով, որ մի օր էլ մուտք կըգործի մեր գաւառը այդ փրկարար հոսանքը, այժմ մնում է տեղացի, իր կոչման բարձրութեան վրայ կանգնած երիտասարդութեանը, որ շտապացնեն այդ [illegible] և նրա հետ ձեռ ձեռի տուած կռւեն ամեն տեսակ չարիքի դէմ, մանաւանդ անկշտում վաշխառուի հետ, որը վերցընում է գիւղացուց նրա դառը աշխատանքի ար-

digitised by A.R.A.R.@

գիւղը և թողնում նրան կիսաքաղց, մերկ ու հիւանդ։

Միջոցները, որոնցով պիտի կռուել գիւղական չարիքների դէմ, բազմաթիւ են, բայց առայժմ ամենահրաժեշտներն են. դպրոցներ՝ բոլոր գիւղերում, սպառողական ընկերութիւններ, հացի շտեմարաններ և, եթէ հնար կայ, գիւղական բանկեր։ Այդ մասին թող մտածի ու հոգ տանի մեր գաղափարական երիտասարդութիւնը։

ՍԻՒՆԵՑԻ

## ԳԻՒՂԱԿԱՆ ԲԱՆԿ

Համզաճիման, 6-ին ապրիլի.

Եկել է գարուն. սեւացած գետինը սերմնացանի է սպասում, իսկ սերմնացանը, ամեն ինչ մոռացած, ընկել է դռնից դուռ, գիւղից գիւղ և փոխ հաց է խնդրում ցանելու համար։ Փոխ է խնդրում ցանելու համար, որ աշնանը քաղից յետ տայ իր փոխը, ի հարկէ տոկոսի հետ միասին։

Բայց ամենքն էլ նրան դատարկաձեռն են յետ դարձնում։

Ի՞նչ անէ գիւղացին. մի զոյգ եզ և մի կով ունէր։ Աշնանը՝ հաց չունէր ուտելու, ծախեց կովը, որով գնեց ուտելիք. Ներկայիս մնացել է մի զոյգ եզը— նրա յոյս ու ապաւէնը։ Նա մի քանի անգամ միտքը դարձրել էր եզները ծախելու վրա, եզներս ծախեմ, ցանելու հաց առնեմ, մտածում էր նա, բայց ինչո՞վ ցանեմ, ինչո՞վ կալսեմ...

Դրացիները արդէն ցանքը կէս են արել. թաղել են հողի մէջ հացահատիկները—իրանց ապագայ յոյսը։ Իսկ սերմացու չունեցող խե՞ղճը...

Նա ձեռքերը ծոցին, վիզը ծռած, նայում է իր չըցանած արտին, նայում է կապոյտ երկնքին և... հեռանում է...

Եւ յոյսը ամեն տեղից կտրած, նա դիմում է գիւղի իշխանաւոր մարդկանց. «Ի սէր Աստուծո, տուէք ցանելու հաց, ցանեմ, և, երբ որ աշնանը քաղեցի, միասին կիսենք այնպէս, ինչպէս ընդունուած է»։ Այս առաջարկութիւնը գիւղի իշխանաւորը ընդունում է ուրախութեամբ, ընդունում է, որովհետև կիսելու ժամանակ, մէկ ինքը կըգիտենայ թէ ինչպէս կըկիսէ մէկ էլ Աստուած։

Թէև հիմայ գիւղացին դարդից պրծաւ (որովհետև արտը ցանած է), բայց նա կրկին մտածում է, լալիս է...

Այս անգամ նա մտածում է աշնան մասին. որի համար և լալիս է նա։

Աշնանը արտը կըքաղէ, քաղելուց յետոյ գիւղի իշխանաւորի հետ կըկիսէ. իրան կը մնայ այնքան հաց, որ հազիւ ուտելիքի բաւականանայ։ Բայց որտեղից տայ նա իր պարտքերը, ինչով ծածկէ նա իր մերկացած ընտանիքի մարմինը կամ վերջապէս որտեղից ճարէ նա միւս գարնան համար ցանելու հաց։

Ահա սա է նրա աշնան դարդը. սրա համար է նա լալիս։

Բայց եթէ գտնուէր մէկը, որ նրան փոխ հաց տար ցանելու (ի հարկէ չնչին տոկոսով), այն ժամանակ նա կըցանէր, քաղելուց յետոյ կըտար իրա փոխ առած հացը, իսկ մնացածը բաւական կըլինէր թէ ուտելու, թէ ցանելու և թէ մասամբ պարտքերից կըթեթևանար։

Ուրեմն, գիւղացուն հարկաւոր է մի այնպիսի հիմնարկութիւն, որտեղից նա կարողանար փոխ հաց վերցնել՝ չնչին տոկոսով։

Այսպիսի հիմնարկութիւններ գոյութիւն ունին Կովկասում։

Այդ հիմնարկութիւնների անունն է «Գիւղական բանկ»։ «Գիւղական բանկերը» անծանօթ հիմնարկութիւններ են մեր գիւղացիների համար։

Մ. ԲԱՂՐԱՄԵԱՆՑ

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՂԱՐՍԱՑ ՇՐՋԱՆԻ ՇԻՐԱԿԻ ԳԻՒՂԵՐԻՑ

Համզաճիման, 26-ին մարտի.

Ցանում են. գետինը արդէն սեւացել է. դաշտերում սկսել են ցանել. չաղ տոկոսով փոխ հաց տուող վաշխառուները առաջ են եկել. օրերը կանգնած են. սպասում ենք անձրևի. կանաչը երևում է։

Հարկերը հաւաքում են։ Արդէն մի ամիս է բաժանել են հարկերի թղթերը։ «15 օրուայ մէջ ով որ հարկերը չըներկայացրեց, մալերը օպիս կանենք», այս խօսքերը ասելով են բաժանում հարկի թղթերը։ Թէև իշխանութիւնը ինչ որ ասում է խօսքով նոյնը գործով ցոյց չի տալիս, բայց այս անգամ նա իր ասածը ցոյց տուեց գործով։ Հարկի թղթերը ուղարկեց. 15 օր անցաւ, փողերը չըներկայացրին, կատարուեց օպիսը։ Այնպէս որ Շիրակի այս մասի շատ գիւղերի մալերը օպիս է արուած։ Գիւղերում շրջում են տասնեակ սարժնիկներ՝ հարկերը հաւաքելու համար։ Ծանր դրութեան մէջ ենք։

Վարակիչ հիւանդութիւնները տարածւում են։ Եկել է գարուն. հաղորդակցութիւնները բացուել են և վարակիչ հիւանդութիւնները անխնայ տարածւում խաւարի մէջ խարխափող գիւղացիներիս մէջ։ Տասնեակ երեխաներ կոտորւում են.., Բժշկական օգնութիւնը շատ չնչին է, 15 գիւղին եթէ մէկ ֆէլդշէր լինի, էն էլ լաւ է. եղածն էլ խօսում է միզ անհասկանալի լեզւով։ Թէև մեզ մօտ հայ-թուրքական կոտորած չեղաւ, բայց բաւականին զոհեր տուինք, շնորհիւ մեր տգիտութեան։

Մ. ԲԱՂ...Ց

digitised by A.R.A.R.@

## ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻՆ

—

Կրկին անգամ խնդրում ենք այն հայուհիներին, որոնք կցանկանային մասնակցել իրենց աշխատութիւններով «Արցունքներ» գրական գեղարուեստական ժողովածուին՝ յօգուտ աղէտից վնասուածների, շուտով ուղարկել մեզ նիւթերը (վէպեր, պատկերներ, պատմուածքներ, բանաստեղծութիւններ, կոտորածի նկարագրութիւններ և այլն)։ Որովհետև ժողովածուն շուտով կը տրուի տպագրութեան, ուստի վերջին անգամ խնդրում ենք, որքան կարելի է շուտով ուղարկել մեզ ժողովածուի համար վերոյիշեալ նիւթերից և լուսանկարներից։

Յարգանօք՝ օր. Զարէլ Բերբերեան, խմբագրող «Արցունքներ» ժողովածուի։

Հասցէ г. Майкопъ (Куб. обл.) օր. Զ. Բերբերեան։

# ԴՊՐՈՑ

## ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ

—

Այժմ կուլտուրական երկրներում ապացուցուած է հոգևորականութեան վնասակար դերը կրթական հաստատութիւնների նկատմամբ։ Այս ի հարկէ գլխաւորապէս այն պատճառով է, որ ինքը հոգևորականը, դաստիարակւած լինելով այն ուղղութեամբ, որի միջոցով նա ստանձնել է հոգևոր պաշտօնը, որ և իր ձեռքն առնելով սովորող սերնդի կրթական գործը, բնականաբար այն ուղղութեամբ պիտի դաստիարակի, ինչ ուղղութեամբ դաստիարակւած է ինքը։

Գուցէ, վանականի մէջ պատահեն և գեղեցիկ յոյսեր ու նպատակ ունեցողներ, բայց նրանց գործերում միշտ երևում է կղերական նախապաշարմունքը. այդ անխուսափելի է։ Ահա այս տեսակէտից հոգևորականութիւնը ամեն ազգի մէջ ժողովրդի կուլտուրական աստիճանի համաձայն միշտ յետ և յետ է մղւում ասպարէզից, թողնելով այն աշխարհական մարդկանց ձեռքը։ Եւրոպական ժողովուրդները քաղաքակրթութեան բարձր աստիճանի վրայ են և նրանց բոլոր ուսումնարանները այժմ լաւագոյն մանկավարժներով են ղեկավարւում։ Նոյն բանը պիտի լինի և այն երկրներում, որի պատմական ընթացքը կուլտուրական Եւրոպայի շաւղով կընթանայ։ Հայերն արդէն այդ զարգացման ճանապարհի վրայ գտնուելով, բնականաբար այստեղ նոյն երևոյթները պիտի տեղի ունենան, ինչ որ Եւրոպայում։

Այժմ, գիտակցելով հոգևորականութեան ասպարէզից հեռանալու անհրաժեշտ կարևորութիւնը, պիտի մենք ամեն կերպ աշխատենք այդ ի կատար ածելու, քանի որ մենք ունենք այժմ դրանց ասպարէզից հեռացնելու։ Մեր հասարակութեան անմիջական անհրաժեշտ շահերը մեզանից այդ են պահանջում. և մենք պարտաւոր ենք մեր յետագայ սերունդներին այդպիսի նախապաշարումների ազդեցութիւնից զերծ պահելու և ընդհանրութեանը աւելի օգտակար դարձնելու համար մտածել։

Ճեմարանը և թեմական դպրանոցները, մի խօսքով մեր կրթական գործը գտնւում է մեր հոգևոր սարքի լիազօր իշխանութեան տակ։ Թեմական դպրոցները համեմատած Ճեմարանի (Գէորգեան) հետ բաւական զերծ են կղերականութեան ազդեցութիւնից։ Իսկ Ճեմարանը, բոլորովին ձգւած լինելով կղերի կամքին, անկասկած պիտի կառավարւի կապրիզների կամայականութեամբ, որը կրթական գործի վերաբերմամբ շատ կործանարար է։

Այժմ, իմանալով իրերի ընթացքը, փոքր ի շատէ զարգացած մարդու համար պարզ և ցանկալի է, որ մեր ուսումնական գործը հաստատուն հիմքերի վրայ դրւի, և մեր դպրոցները դառնան ուսումնարաններ բոլոր եւրոպական իմաստով։ Իսկ այս լինելու համար հարկաւոր, որ է մեր հասարակութիւնը ձիգ գործ դնի, գլխաւորապէս՝ հայ ինտելիգենցիան։

Ահա այսպէս, ի նկատի առնելով Ճեմարանի նոյն- և Թեմական դպրոցների դրութիւնը, ես կոչ եմ անում հայ ինտելիգենցիային զբաղւել այդ կարևոր խնդրով և վերջ տալ միանգամայն այս խայտառակութեան. մի խնդիր, որի լուծումը յետագայում շատ մեծ նշանակութիւն կունենայ, տալով հայ հասարակութեանը արժանաւոր գործիչներ և հասարակութեան շահերը ճշտապէս ըմբռնողներ, և ոչ թէ միայն փորի համար ապրողներ, ինչպէս են այժմ մեր սրբազան հայրերը։

ՓԱԼՈՒՍՏ ՍԻՐԵԱՆ

## Ա Խ Լ Ո Ճ Ը

—

(Մանկական յիշողութիւններից)

Մինչև այսօր էլ չեմ մոռացել. նրա դաժան դէմքն ու սոսկալի պատկերն այս րոպէիս էլ աչքիս առաջն է...

Երկուշաբթի առաւօտն էր։ Մեծ-պապի դէշ երկուշաբթին։ Երկինքն ամպել սև-սեցել էր, մեծ պապի պէս սևաւորւել։ Փետրւարի խելառ թիփին բուք ու բորան բերանն առած փչում, շաչում, շառաչում էր... Մերթ կատաղած ոռնում, պարում, ուլուլում, մերթ ուժաթափ հեւում, հեծում, հեծկլտում...

Ուշ էր, երբ ես վերկացայ. առաւօտեայ քունն անուշ է, մարդ չի ուզում վեր կենեայ։

digitised by A.R.A.R.@

Աչքս բացի, տեսնեմ դռմուս մարդ չըկայ. մեծ ու փոքր վեր են կացել, մենակ ես եմ պառկած մնացել… Ո՛ւշ էր, շատ ուշ… Թէ ամպ չըլինէր, արեւն արդէն գլխած կըլինէր, իսկ այդ պահուն գիւղում քնել չի լինի… Արեւն եկնի՝ պառկած տեսնի… ամօթ է…

—Հօ, շան լակոտ, հըլը տեղէդ չե՞ս ելել… Ախլօճը տեսնի հիմի, ինչ կըսէ…

Մամս հայհոյելով վերմակս քաշեց մի կողմ նետեց: Զըր-չփլախ մի կերպ տեղիցս փախայ, քօթակից պրծայ…

Ու հաւար-հաւար լոկ չըլտօ (պատռտած) չուխաս անձս ձգելով, բոբիկ վազեցի մեծ-պասի նորեկ պէլ «Կարապետի» Նեռ-Ախլօճի դէմքը տեսնելու:

Տան[1]) դուռը բացի: Թոնրի դորշ ծուխը ուշ աշնան սեւ-մութ ամպերի նման, իրար հրելով, իրար գրկելով առիքն (առաստաղ) են լցւում, ճամբայ են ուզում ու նեղլիկ անցքը մի կերպ գտնելով, ժայռից դուրս վիժող ջրվէժի նման երթիկից ժայթքում, բուքին են խառնւում ու թռչում հեռուն, փախչում են հեռուն, ամպերին հասնում…

Միւս երթիկից յանկարծ վռալով անհեյլ քամին կտուրի ձիւնը մաղած մոխրի պէս ներս է շպրտում ու ինքը թոնրի ծուխը գիրկն առած նեղ ծխնելոյզից նորից դուրս թռչում, ծեծւած տղի պէս հեծում, հեծկլտում:

Ու վարի երթկի երկաթէ խաչքից[2]) կարծես պաղ քամու թեւերին յենւած, կախւել էր մի անհեյլ հրէշ…

Ախլօճն էր դա, մեր խեղճ Ալէքին շինած ու կախած հրէշ-Ախլօճը:

Գլուխը կարմիր սոխից էր շինած ու թաղը եօթ հատ սեւ ու պսպղուն փետուրով զուգած: Իրան՝ բրթոտ, ձմրան պէս ճերմակ մորթով էր պատած ու ձեռքին բռնած կարմիր ճիպոտը, գայլոնի նման, որ կարծես մարդու կարմիր արիւնով լինէր ներկւած, ահ ու սարսափ էր տարածում չորս դին: Խաչքն ու Ախլօճը իրար հետ կապող եօթը գոյնզգոյն թելերից հիւսած կարճ թոկի վրայ եօթ բար կար շարած՝ մեծ-պասի եօթը շաբթուան թւով: Ու մէջքին կապած փայտէ կեռ թուրը տիրոջից երկար ճօճում էր օդում ոտքերից կէլ ցած…

Չըգիտեմ ինչպէ՞, հակառակ կամքիս, մի կողմից երկիւղն ընկել էր սիրտս, մի կողմից քանի վեր էի նայում ծիծաղս էր գալիս…

Ախ՛ր ինչե՜ր են հնարում մարդիկ ինքն իրանց գլխին…

Կարծես անողոք երկինքը վերից քիչ դարդ ու ցաւ է ուղարկում գիւղին. հազար մի դարդ էլ իրանք են շինում սեփական ձեռքով ինքն իրանց գլխին… ազատ-անձնիշխան ստեղծւած մարդուն ձեռք ու ոտք կապում, ամուր կաշկանդում…

Մեծ-պասի նման դէմքը խոժոռած վերն Ախլօճը ճօճում էր գլխիս: Ու ես բաց-բերան ապուշի նման նայում էի վեր…

—Էդ ո՞վ է էգտեղ դրան մօտ կանգնել… Էդ Ախլ-պապի թուր ու թուանքը չէ՞ տեսել, ինչ է…

Ու Ախլպապը (Ախլօճ) ճօճաց վերևից, դըռնաց ու եկաւ…

Ու ես ժպտերես մինչ պառաւ մամիս հըռնարած անմիտ սպառնալիքն էի ծաղրում, ծիծաղում… յանկարծ վերևից, աջից ու ձախից, ինչս էլ չըգիտեմ, ի՞նչպէս, ո՞րտեղից քար ու կոշտ էր որ տեղաց մերկ գլխիս, կրծքիս, ոտներիս…

—Մայրիկ ջան, մեռայ… ճակատս բռնած ես լեղապատառ մի կերպ դուրս ընկայ…

Ու ու ու… քամին վերից ոռնալով փչեց, ցրտից կապուտկած ճամբորդի նման հազիւ հազ կարծես մի լաց դուռ գտած, տեղ էր աղերսում ապաստան խնդրում…

Ու բուք ու բորան, ու ցուրտ ու թիփի, կարծես Ախլօճն էր հետը բերել, տուն ու դուռ լցրել ու մեզ դուրս քշել, չէր թողնում, որ մենք մեր տունը մտնենք…

Ողջ երկու շաբաթ ընկուզի նման ճակատս ուռած, կապուտկած մնաց:

Էլ ո՞ր յիմարը կը համարձակւէր տան գըռնից նայել, կամ թէ «մեծերիս» խօսքը չը լսել… Ախլօճն այնտեղ պատրաստ կախած էր… կարկուտի նման քարը կըտեղար վերևից գլխիդ…»

Խեղճ մանուկներս կարծես ներքևը սև գետնի վրայ վզերիս բարձած քեզ դարդ ու պատիժ

[1]) Տուն-խոհանոց, աշխանոց, բնակարանի այն բաժանմունքն, ուր թաղած է թոնիրը և հաց են եփում:

[2]) Խաչք-խաչաձև երկաթ է, որ ամրացրած է երթիկի վրայ մուտքը պահպանելու համար:

digitised by A.R.A.R.@

բեռներ ունէինք, մէկն էլ վերևից բերին կախեցին ջինջ օդի միջին քամու թևերից...

Ամառը կերթաս՝ մայն արածելու, չեն թողնում ազատ, ազատ դաշտին մէջ սար ու ձոր չափես, սրտանց մի խնդաս, գէթ մի օր ուրախ խաղաս. Թռչկոտաս։

Ղորուղչին (հանդապահ) գլխիդ կանգնած է այնտեղ՝ կոպալը ձեռին...

Ձմեռ է գալիս, ասում ես պրծանք, էլ բան գործ չըկայ, տաք գոմում ազատ կը խաղաս, խնդաս...

—Շուտ արա, պրծի, գոմերը աւլէ մսուրը սրբէ, հորթերուն խոտ տուր, տակերը չորցու... Թէ ջուրը թեփի, բուք ու բորան է, մալին ջուր կրէ, որ ներսը ջրես...

Անխտիր ամենքն հրամայում են՝ հայրդ, հօրեղբայրդ, եղբայրդ, պապդ... ով քեզնից մի քիչ հասակով մեծ է կամ թէ ուժեղ է... Եւ դու սուս ու փուս, գլուխդ կախած, պիտի կատարես թէ չէ՝ «Ախլոճն երթիկից գլխիդ քարով կը զարնէ...»

Ու այս լայն-արձակ աշխարհի մէջին ինչ որ Ալոքին-Ախլոճի ձեռքին մեզ պէս հէ՞ ինչքան խեղճ-մոլոր տղայք գերի են դարձել...

Ու լուռ ու խոնարհ, վզերս ճկած մենք տանում էինք ամեն բռնութիւն... Չէ ախր «ահը վեր է քանց մահը»...

Բայց այս աշխարհում չէ՞ որ ամեն ինչ վերջ-վախճան ունի... Ու ամեն ուժեղ, ամեն բռնակալ որքան մեծանայ, որքան բռնանայ, այնքան իր վերջին, սև գերեզմանին շուտ կը մօտենայ...

—

Մեծ-պասի վերջին շաբաթն էր։ Մասի կատարից հեգնող ծիծաղի պէս գարնան հովն էր փչում ու սար ու ձոր ծածկող ձիւնի հաստ շերտն այդ ծիծաղից խենթացած, բարկութիւնից, երկիւղից, պատռել, ճեղքել, ճաք-ճըքել էր..

Կռիւ էր, կատաղի կռիւ... Գարունն իր մատաղ հովերով՝ իր կենսաբոյր սլաքներով դուրս էր եկել լերան քամակից ու անվրդով, անսայթաք առաջ էր գալիս կեանքին տիրելու... Ու զառամ բռնակալը՝ ծերուկ ձմեռն հոգևարք հիւանդի պէս օրհասական ոռնոցը ձգած, իր բուք ու բորանով, իր սպանիչ շնչով վերջին ճիգն էր թափում նոր ծնունդ, «մանկան» մատաղ ծիլերը խեղդելու...

Բայց գալիս էր «Նա». գալիս էր հեգնեղ դառած լեռն ի վայր, գալիս էր գետնի միջից ծիլեր դառած հէնց իրեն՝ ձիւնի տակից, գալիս էր օդի միջից՝ երկնքից ծիծեռնակի ծլվլոցով... ամեն կողմից գալիս էր «Նա»... ու իր հետ բերում կարմիր, ալ ու խայտխալ «Զատիկ»-ը։ Սպասելու էլ ճար չըկար. ձմեռ ու մեծ-պաս հոգի էին հանել, ուժերս քամել... Ու մենք գրկաբաց սպասում էինք կենսատու «եկւորներին»՝ անուշ Գարնան ու Զատկին։

Բայց Ախլոճը դեռ ճոճում էր... Արիւն տեսած գայլի նման գնում-գալիս, քարի սարափ էր թափում։ Բայց այդ քարի սարափից էլ վախեցող չէր մնացել... Գիտէինք, որ վաղ թէ ուշ «գարունը պիտի գայ», փրկարար զատիկը դռանն է նստած...

Ու մերձ ի մահ Ախլոճը վիրաւոր վագրի պէս յուսահատութիւնից խենթացած, ինքն իր միսն էր ուտում, բզկտում... Շարան-շուրան եօթը քարերն էլ չըկային, ամեն շաբաթ մէկն ընկել էր, մէջքի թուրը կոտրել, գլխի թագը փետրտած, արդ ու զարդը պոկոտած, թեպըլ-փոխուած հաւ էր դարձել...

Զատկի շաբաթ առաւօտն էր. Դեռ արևը տեղից չելած, մենք բոլորս ոտքի էինք. Օ՜, ինչ օր էր այն օրը... Ողջ մեծ-պասի, յիսուն օրւան մաղձ ու թոյնը այդ օրը պիտի թափէինք... Քիչ էր մնում ծծկեր տղայքն էլ ոտք ելնէին, վրէժի թոյնով այնքան լցուած էր սրտերս... Ախր հոգի էր հանել...

Ու հանդիսաւոր խաղ ու կանչով, ձեռքերիս մի-մի ճիպոտ բարձրացանք տան կտուրը։ Ծաղր ու ծանակ Ախլոճին քանդեցինք երկաթի խաչքից ու չորս բոլորը պար բռնեցինք... Զարկինք... զարկինք... դաղուած սրտի բոլոր ուժով, մինչև բզիկ-բզիկ վերջին բուրդը-բամբակը քամուն կեր տուինք...

Ու հսկայ լերան լանջից մրմնջալով, խընդմտալով ծագեց Զատկի կարմիր ու վառ արևը, որ կարծես խեղճ Ալոքին Ախլոճին վերջին հոգոցն էր մրմնջում...

ՋԱԽԱԽԵՑԻ

digitised by A.R.A.R.@

## ԳԻՐ ԵՒ ԳԻՐՔ

### Գրիգոր Վանցեանի—«Հայ հեղինակներ»-ը

Մեր առաջին է պ. Վանցեանի 215 երեսներ բըռնող «Հայ հեղինակներ»-ի ստւար հատորը, որը պարունակում է իր մէջ հայ ընտիր հեղինակների ընտիր գրւածքներից 140 հատւածներ, իսկ ռուս գրականութիւնից՝ 4։ Դրանք ռուսահայ 15 սիրելի հեղինակների և 4 Թուրքահայ մեր յայտնի գրողների մի սիրուն, համով, հոտով կազմւած գրական ծաղկափունջ է, որը ոչ միայն որպէս ձեռնարկ՝ միջնակարգ դպրոցների աշակերտների համար, այլ նոյն իսկ հայ—ընտանիքներում, որպէս ընթերցանութեան նիւթ հետաքրքրական են, մանաւանդ որ, կազմողը աւել է նմուշների հետ միասին դրանց հեղինակների թէև համառօտ, բայց էական կենսագրութիւնն ու գրական դէմքը։ Թէ հատւածների ընտրութիւնը և թէ նիւթերի դասաւորութիւնը արւած է խնամքով և հետևողականութեամբ. և հէնց դրանով պէտք է բացատրել մեր գրական աշխարհում բաւական հազւագիւտ այն երևոյթը, որ վեց ամսում պ. Վանցեանի «Հայ հեղինակները» ունեցել է երկրորդ տպագրութիւնը։ Դա գրքի համար ամենալաւ վկայականն է, ուստի և ցանկալի է, որ «Հայ-հեղինակները» տարածւեն նաև հայ դպրոցների պատերից դուրս՝ հայ ընտանիքներում, ուր հայ հեղինակների իսկական երկերը շատ էլ ընդունւած չեն։ Գոնէ այս ճանապարհով թող հայ միջին դասակարգը գաղափար կազմի մեր գրողների տաղանդի, ձգտումների և գրչի արտայայտութիւնների մասին.—իսկ դրա համար խորհուրդ կըտայինք պ. Վանցեանին, երբ նա ձեռնարկէր երրորդ տպագրութիւնը, մատչելի դարձնէր «Հայ հեղինակները», իջեցնելով գինը մի րուբլուց 60 նոյն իսկ, եթէ հնարաւոր է, 50 կոպէկի։

—

Ջաւախեցի «Պատկերներ» գրքոյկ I. Թիֆլիզ 1906 թ. տպ. «Հերմէս» գինը 60 կ.։

Այս 168 երեսից բաղկացած գրքոյկը պարունակում է իր մէջ մեր գիւղական կեանքին ամենամօտ ծանօթ պ. Լ. Տէր-Գրիգորեանի (Ջաւախեցի) տասն և մէկ պատմւածքները, որոնք արտատպւած են պարբերական հրատարակութիւններից։ Ջաւախեցին մեր գիւղի իսկական բանաստեղծն է. ուրիշ անուն չեմ կարող տալ նրա պատկերներին, որոնցից իւրաքանչիւրը մի-մի արձակ բանաստեղծութիւն է իր որոշ չափով, սիրուն, բուն ժողովրդական յանգով, դարձւածքներով։ Բոլոր պատկերները իրական են և ցոյց են տալիս հեղինակի մօտ ծանօթութիւնը գիւղի բազմաթիւ ցաւերի հետ, գիւղացու հոգեբանութեան հետ։ Այս կողմից պ. Ջաւախեցին բացառիկ դիրք ունի բռնած մեր բոլոր նոր այն գրողների մէջ, որոնք թեքւել են դէպի բուն ժողովուրդը, և նւիրել են իրենց նրանների-քին և հասարակական կեանքը կազմող երևոյթների ուսումնասիրութեանը։

---

## ՓՈՍՏ-ԱՐԿՂ

—

Ախալցխա—պ. Կ.-ին։ Ձեր նամակը չի տպւի։

—

Մեր ոչ գիւղացիական շրջանի թղթակիցներին.— Տեղական բնաւորութիւն կրող ոչ սկզբունքային յօդւածները տեղ չեն գտնի «Աշխատանքի» մէջ։ Ձեր նպատակների համար յարմար են օրաթերթերը։

—

Մեր թղթակիցներին։ Նիւթերի շատութեան և տեղի սղութեան պատճառով յօդւածներից և թղթակցութիւններից նրանք, որոնք պէտք է տպագրւեն, քիչ ուշանում են։ Ձեզ կը պատասխանենք առանձին առանձին նամակներով։

—

Զատկական տօների պատճառով «Աշխատանք»-ի № 12-ը փոխանակ ամսիս 9-ին՝ լոյս է տեսնում 16-ին։

—

Խմբագրութիւնս յայտնում է իր շնորհակալութիւնը այն բոլոր անձանց, որոնք նամակներով շնորհաւորել են մեր Զատիկը։

—

Մեր աշխատակիցներին և թղթակիցներին։ Նորից դարձնում ենք ձեր ուշադրութիւնը, որպէս զի նիւթերի ընտրութեան մէջ լինէք խիստ, քննող և հետազօտող։ Փոխանակ բազմաթիւ հարցերի՝ ընտրեցէք մի քանիսը և դրանց մասին տւէք առանձին-առանձին ուսումնասիրութիւններ։ Միմիայն այդ տեսակ գրւածքները կունենան արժէք և տեղ կըգտնեն «Աշխատանք»-ի էջերում։ Թղթակցութիւններից միայն այնպիսիները կըտպագրւեն, որոնք վերաբերում են աշխատաւորի և գիւղական կեանքին, և այն էլ՝ ընտրովի։

Խնդրում ենք տալ մեզ պարբերաբար և մանրամասն տեղեկութիւն աշնանացանի և գարնանացանի մասին, նաև երկրագործական և այգեգործական այն աշխատանքների, որոնք կատարւում են ձեր շրջաններում։

—

Յատկապէս խնդրում ենք մեր բաժանորդներից և գործակալներից յայտնել մեզ իրենց անկեղծ և խիստ կարծիքը «Աշխատանքի» մինչև այժմ լոյս տեսած համարների բովանդակութեան մասին։ Մեր ընթերցողների և մանաւանդ ժողովրդին մօտ կանգնած անձանց կարծիքը և ցանկութիւնները մեր գործի աջողութեան և նպատակայարմարութեան տեսակէտից ունեն առաջնակարգ արժէք։ Իւրաքանչիւր խելացի ցուցմունք մեր կողմից ուշադրութեան կ'առնւի։

---

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Խմբ. Հրատ. ԱՇՈՏ ԱԹԱՆԱՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@